703 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Հայաստանի միջնադարի պատմության մեջ 703 թ. ապստամբությունը հայտնի փաստ է, սակայն նոր նյութերի ի հայտ գալը մեզ ստիպեց վերանայել այս կարևոր շարժմանն առնչվող դեպքերն ու մանրամասնությունները։ VIII դարի առաջին հնգամյակը հայոց պատմության մեջ իրոք խոովահույզ շրջան է, որի և հատկապես 703-ի ապստամբության էությունն ըմբռնելու համար անհրաժեշտ է հետադարձ ակնարկ նետել նախորդ տասնամյակին։

685 թ. խալիֆա էր դարձել Օմայան Աբդ ալ-Մալիքը և նույն տարում Բյուզանդիայի գահն էր գրավել Հուստինիանոս II-ը։ 689-ին բյուզանդացիք խալիֆայության դեմ դրգռեցին Ամանոսի լեռներում ապրող մարդահտներին (ջարաջիմա)[1] և խալիֆայության ու արևելահռոմեական կայսրության միջև դաշինք կնքվեց, ըստ որի դժվարին կացության մեջ գտնվող ամիրապետը պարտավորվում էր շաբաթական հազար դինար վճարել՝ զերծ մնալու համար լեռնականների հարձակումներից և բյուզանդական որոգայթներից։ Նույն տարում բյուզանդական զորքերը ներխուժեցին Հայաստան (ինչպես նաև Կիպրոս)[2] և Հայոց իշխան կամ պատրիկ նշանակվեց Ներսեհ Կամսարականը[3], արաբների դեմ կռվում զոհված Աշոտ Բագրատունու փոխարեն։

Բանն այն է, որ Աբդ ալ-Մալիքը խիստ զբաղված էր ապստամբների դեմ պայքարով։ Հիջազում իրեն խալիֆա էր հռչակել Աբդալլահ իբն ալ-Զուբայրը, իսկ Իրաքում տիրություն էր անում Մուխտարը, որն իր շուրջն էր հավաքել շիիներին, սակայն 687-ին պարտություն կրեց Իբն ալ-Զուբայրի եղբայր Մուսաաբից ու սպանվեց։ Մուսաաբն իր հերթին 691 թ. պարտվեց խալիֆայի եղբայր Մուհամմադ իբն Մրուանից Դայր ալ-Ջասալիկի ճակատամարտում և սպանվեց, իսկ 692-ին Իրաքի ու Իրանի փոխարքա Հաջջաջը խեղդեց Աբդալլահ իբն Զուբայրի շարժումը Հիջազում[4]։ Նման իրադրության մեջ Աբդ ալ-Մալիքն արդեն ի վիճակի էր Հուստինիանոսին դեմ դուրս գալու, սակայն վերջինս ինքը խախտեց պայմանագիրը և դարձավ նախահարձակ։ 692 թ. բյուզանդական զորքերը գրոհեցին Ասորիքի ուղղությամբ, բայց պարտվեցին Սեբաստապոլսի ճակատամարտում[5]։

Այս պարտությունն արդեն վճռեց Հայաստանի ճակատագիրը և 693 թ. ամիրապետի եղբայր Մուհամմադ իբն Մրուանը նշանակվեց Հայաստանի (Արմինիա), Ջազիրայի ու Ատրպատականի փոխարքա[6]։ Բանն այն է, որ Աբդ

---

[1] Beladsori, Liber expugnationis regionum. Lugd. Bat., 1865, p. 160. Tabari. Tarikh. VI, Le Caire, 1964, p. 150. Ph. Hitti. History of the Arabs. London, 1958, p. 204—205.

[2] История Византии. II, М., 1967, с. 41—42.

[3] *Ստեփանոսի Տարոնացւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական. Պետերբուրգ, 1885, էջ 100—101։*

[4] K. V. Zettersteen. Abd al-Malik.—Enc. of Islam, I, Leyden—London, 1960. p. 48—49.

[5] История Византии. II, с. 42.

[6] Ibn al-Athir. al-Kamil fi-t-tarikh. IV, Qahira, 1934/1935, p. 28. *Իբն ալ-Ասիր. Երևան, 1981, էջ 28։*

ալ-Մալիքի ու եղբոր միջև հակասություններ կային, քանզի վերջինս անտարբեր չէր գահի նկատմամբ, սակայն խալիֆան չանում էր միշտ սիրաշահել նրան[7]։

Այդ ժամանակ Հայոց իշխանն էր Սմբատ Բագրատունին, որը հպատակություն հայտնեց արաբներին, թեև Չորրորդ Հայքը դեռ մնում էր բյուզանդացիների ձեռքում[8]։ 695 թ. հեղաշրջումը Բյուզանդիայում, որի հետևանքով տապալվեց ու աքսորվեց ռազմատենչ Հուստինիանոսը ու կայսր դարձավ Լեոնտիոսը, նպաստավոր էր արաբների համար, որոնք նվաճեցին Չորրորդ Հայքը և 695, 696 թթ. ուժեղ գրոհներ կատարեցին դեպի Փոքր Ասիա[9]։ 698 թ. նոր հեղաշրջումը ծովակալ Ապսիմարոսին դարձրեց Տիբերիոս III կայսր (698—705) և Բյուզանդիան զորք ուղարկեց, որը ներթափանցեց Հայաստանի խորքերը։ Նրանց դիմադրեց Սմբատ Բագրատունին Պաիկ դաշտում (ճահճուտի մոտ), սակայն պարտվեց[10]։ 699-ին (մոտավորապես) արաբները նորից ներխուժեցին Հայաստան, սակայն որոշ գավառներ դիմադրեցին, ինչպես, օրինակ, Սևանա կղզին, որը 2 տարի դիմացավ[11]։

Վերջապես, ըստ Ղևոնդի վկայության,[12] Աբդ ալ-Մալիք խալիֆայի 16-րդ տարում, այսինքն 701 թ. Մուհամմադ իբն Մրուանը կատարեց իր մեծ նվաճողական արշավանքը Հայաստան։ Արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրը[13] նույնպես վկայում է, որ հիջրի 81 (26 փետրվար 700—14 փետրվար 701) թ. խալիֆայի որդի Ուբայդալլահը գրավել էր Կարնո քաղաքը (Կալիկալա)։ Իսկ 82 (15 փետրվար 701—3 փետրվար 702) թ. Մուհամմադ իբն Մրուանը մտավ Հայաստան. «Այդ տարում,— գրում է տարեգիրը,— Մուհամմադ իբն Մարուանը ար-

---

[7] Ibn al-Athir. IV, p. 167—168. *Իբն ալ-Ասիր, էջ 167—168։*

[8] А. Тер-Гевондян. Армения и арабский халифат. Ереван, 1977, с. 72.

[9] Yaqubi. Tarikh. II, Beyrouth, 1960, p. 281.

[10] *Ղևոնդեայ Պատմութիւն Մեծի վարդապետի Հայոց, աշխ. Ս. Մալխասեանց. Ս. Պետերբուրգ, 1887, էջ 19։*

[11] *Պատմութիւն Մովսէսի Կաղանկատուացւոյ. Տփղիս, 1912, էջ 366։ Այստեղ երեք տարի է նշվում։ Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի. Երուսաղեմ, 1867, էջ 119։*

[12] *Ղևոնդ, էջ 20։*

[13] Ibn al-Athir. IV, p. 75, 84. *Իբն ալ-Ասիր, էջ 65։ Արաբների կողմից Հայաստանի նվաճման վերջնական, ինչպես նաև Վարդանակերտի կռվի տարին Դավիթ Դվնեցու մահվան հետ կապելով, Մ. Չամչյանը (Պատմութիւն Հայոց. Բ, Վենետիկ, 1784, էջ 378) և Ղ. Ինճիճյանը (Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի. Ա, Վենետիկ, 1835, էջ 445) համարում են 694 թ., քանի որ Դավիթ Դվնացին, ըստ վարքի (Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց. Զ, Վենետիկ, 1813, էջ 228) նահատակվեց 693 թ. մարտի 31-ին։ 693 թ. ճիշտ է այնքանով, որ այդ տարում Մուհամմադ իբն Մրուանը նշանակվեց փոխարքա Հայաստանի (Արմինիա) ու Ջազիրայի (Իբն ալ-Ասիր, էջ 62), սակայն արշավանքը, որի հետևանքով Հայաստանը նվաճվեց, ավելի ուշ էր։ Ա. Մյուլլերը* (История ислама. II, Спб, 1895, с. 91) *գտնում է, որ 700 թ. Հայաստանն արդեն նվաճված էր։ Նույնը կարծում է նաև Լեոն (Հայոց պատմություն. Բ, Երևան, 1967, էջ 325)։ Մ. Օրմանյանը (Ազգապատում. Ա, Պեյրութ, 1959, էջ 56) և Բ. Առաքելյանը (Հայերի ապստամբությունը արաբական լծի դեմ 703 թ. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1941, №№ 5—6, էջ 55—62) նշում են, որ 698—700 թթ. Հայաստանը նվաճվեց։ Ժ. Լորանը* (L'Armenie entre Byzance et l'Islam. Lisbonne, *1980, p. 243) անորոշ հիշում է 698 թ.։ Հ. Նալբանդյանը (Արաբացի ոստիկանները Հայաստանում. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ), 1956, № 8, էջ 107) նույնպես ընդունում է, որ 698—700 թթ. Հայաստանը նվաճվեց։ Սակայն Իբն ալ-Ասիրի ճշգրիտ տվյալներով Մուհամմադն իր արշավանքը կատարեց 82 թ. (15 փետրվար 701—3 փետրվար 702), ուստի այն չի կարելի 701-ից ետ տանել։ Իսկ արշավանքների սկիզբը չէր կարող լինել 698 թ., քանի որ այդ տարի բյուզանդացիք արշավեցին, իսկ արաբների արշավանքը 699-ին պետք է եղած լիներ։ Հետևաբար արաբները Հայաստանը նվաճեցին 699—701 թթ.։*

շավեց Հայաստան, հաղթեց ու նրանք (հայերը) հաշտություն խնդրեցին և նա հաշտություն կնքեց ու կառավարիչ նշանակեց Աբու Շայխ իբն Աբդալլահին»։

Մուհամմադ իբն Մրուանը հարձակվեց հավանաբար 701 թ. գարնանը և ինչպես պատմիչներն են հաղորդում, նրա արշավանքը երկար տևեց։ Նա մըտավ Ջերմաձոր, որի բնակիչներն ամրացել էին բերդերում, սակայն երաշխավորագիր տալու խոստումով իջեցրեց ու կոտորեց ռազմիկներին, գերեվարեց կանանց ու երեխաներին։ Մեծ դաժանությամբ վերաբերվեց Բագրևանդի Ս. Գրիգոր վանքի միաբաններին ու մենաստանն ամբողջովին կողոպտեց[14]։ Գրավեց Դվինը, ուր մեծաթիվ զորք թողնելով, դիմեց դեպի պաշարված Սևանա կղզին, սակայն չկարողանալով տիրել՝ շարժվեց արևելք։ Այս միջոցին Դվինը գրավվեց և արաբական կայազորը կոտորվեց հայերի կողմից, իսկ Մուհամմադը վերադառնալով տիրեց Սևանին ու կոտորեց պաշտպաններին[15]։ Ապա վերադրավելով Դվինը, տեր դարձավ ամբողջ Հայաստանին, նվաճելով նաև Զորրորդ Հայքը, որի իշխան Յոթդևյան Վահանը հպատակություն հայտնեց[16]։ Հայաստանին կցելով նվաճված Վիրքը, Աղվանքը, մերձկասպյան շրջանները (Շիրվան) և Դարբանդը՝ վերջնականապես կազմակերպեց Արմինիա արաբական նահանգը, որի կառավարիչ (ոստիկան) դարձավ, ինչպես հիշվեց, Աբու Շայխ իբն Աբդալլահը։

Ղևոնդը, Հայաստանի նվաճումը մանրամասն նկարագրելուց հետո, հիշում է, որ Մուհամմադը վերադարձավ Ասորիք[17]։ Իրոք, 702 թ. նա Իրաքում էր և մասնակցեց այն կռիվներին, որոնց ընթացքում պարտվեց ապստամբ Աբդ ալ-Ռահմանը։ Դայր ալ-Ջամաջիմի (Բասրայի մոտ) ճակատամարտում (հուլիս 702) իրեն խալիֆա հռչակած զորավարը պարտվեց[18] և ճակատամարտից հետո Մուհամմադը վերադարձավ Մոսուլ[19]։ Նա Հայաստանում այնպիսի դաժան վերաբերմունք էր ցուցաբերել, որ Ղևոնդը այսպես է բնորոշում Հայաստանի վիճակը նրա հեռանալուց հետո. «Իսկ բնակիչք աշխարհիս մնային իբրև դխանձող ծխեալ ի հրոյ և իբրև զօրան վանակ փխրեալ զոր առ ոտն կոխեալ խոզից»[20] («Իսկ մեր երկրի բնակիչները մնացին իբրև հրից ծխացող խանձող և խոզերի ոտքերի տակ փխրված ցորենի խուրձ»)։

Մուհամմադի թողած կառավարչի մասին Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին գրում է. «Եւ դկնի Մահմետի ալ ոստիկան ի Հայս առաքեցաւ Աբդլլա անուն, այր ժանտ ժպիրհ և ապարասան», որը կալանավորում ու կապանքներով չարչարում էր իշխաններին ու ազատներին[21]։ Վահան Գողթնացու վարքում նույնպես հիշվում է «և առաջնորդ զօրուն որ ի Հայս Աբդլայ անուն, դառն և չարաբարոյ»[22]։ Ղևոնդի վկայությամբ «որոյ խորհուրդ վատ ի մէջ առեալ բառնալ զազատախումբն տոհմն յաշխարհէս Հայոց հանդերձ նոցին հեծելովն»[23] («Սա վատ խորհուրդ հղացավ՝ Հայոց աշխարհից նախարարական ազատախումբ տոհմերը մեջտեղից վերացնել, իրենց հեծյալներով հանդերձ»)։ Սա պարզապես նախարարական տոհմերը և այրուձին բնաջնջելու քաղաքականություն էր, քանի որ վերջիններս, ըստ Աբդ ալ-Մալիքի, Օմայանների համար

---

14 Ղևոնդ, էջ 20—21։

15 Մովսես Կաղանկատվացի, էջ 366—367։

16 Theophanis Chronographia. I, Bonnae, 1839, p. 569: Ըստ Մ. Զամչյանի հույները նրան յոթդևյան կոչեցին արաբներին հանձնվելու պատճառով (Պատմութիւն Հայոց. Բ, էջ 382—383)։

17 Ղևոնդ, էջ 23։

18 Tabari, VI, p. 363.

19 Նույն տեղում, էջ 364։

20 Ղևոնդ, էջ 22։

21 Հովհաննես Կաթողիկոս, էջ 120։

22 Վիպասանական վարք և վկայաբանութիւն սրբոց. ԺԹ, էջ 89.

23 Ղևոնդ, էջ 23։

արգելք էին Հայաստանում իրենց տիրապետությունն ամրապնդելու գործում։ Այս նպատակն իրականացնելու համար ձերբակալվեցին ու Դամասկոս ուղարկվեցին Հայոց իշխան Սմբատ Բագրատունին և Սահակ կաթողիկոս Զորափորեցին[24]։ Սկսվեցին կրոնական հալածանքներ (ինչպես, օրինակ, Դավիթ Դըվնացու[25] նահատակությունը խաչի վրա)։ Հարկավ, այս պարագան եզակի չէր և եղել է ընդհանուր հավատափոխության պահանջ, քանի որ, ինչպես կտեսնենք, 703-ին Սահակ Զորափորեցին հավատի ազատություն էր պահանջում արաբներից[26]։

Սակայն հատկապես ծանր էր խալիֆայության հարկային լուծը Աբդ ալ-Մալիքի օրոք։ Ծանր վիճակում գտնվող պետությունը թշնամիներից մաքրելուց հետո նա վերափոխումներ կատարեց, արաբերենը դարձավ միակ պետական լեզուն՝ դուրս մղելով հունարենն ու պարսկերենը։ 695-ին թողարկվեցին առաջին արաբատառ դրամները[27]։ Պաշտոններից հեռացվեցին այլակրոնները և նրանց տեղը գրավեցին արաբ մահմեդականները։ Այս բոլորի մեջ ամենադժվարը հարկային լծի և հատկապես գլխահարկի (ջիզիա) ծանրացումն էր, որն ընկավ զիմմի (ոչ մահմեդական) ազգաբնակչության վրա։ Նրա օրոք վերջնականապես սահմանազատվեցին խարաջ (հողահարկ) և ջիզիա (գլխահարկ) տուրքերը, ընդ որում գլխահարկը բավական ծանր էր։ VIII դարի ասորերեն պատմական երկը, որ վերագրվում է Դիոնիսիոս Տելլ Մահրացիին, այսպես է նկարագրում Վերին Միջագետքի (Ջազիրա) քրիստոնյաների վիճակն այդ օրերին. «1003 սելևկյան (691—692) թվականին Աբդ ալ-Մալիքը տադիլ (վերահաշվառում) կատարեց, այսինքն հարկ դրեց ասորիների վրա։ Նա մի խիստ հրովարտակ հանեց, ըստ որի ամեն մարդ պարտավոր էր գնալ իր երկիրը, ծննդավայր գյուղը, ուր պետք է արձանագրեր իր անունը, հոր անունը, իսաղոզի որթատունկերը, ձիթենիները, ունեցվածքը, դավակները և ամեն տեսակ սեփականություն, որ ուներ։ Այսպիսով սկիզբ առավ գլխահարկը և ամեն տեսակ չարիք տարածվեց քրիստոնյաների վրա։ Մինչ այդ թագավորները հարկ էին վերցնում հողից, բայց ոչ մարդկանցից։ Այդ օրվանից Հագարի որդիները (արաբները) սկսեցին եգիպտական ստրկություն սահմանել արամեացիներին։ Վա՜յ մեզ, որ մեղանչել ենք և ստրուկներն են մեզ վրա իշխում։ Սա առաջին մարդահամարն էր, որ արաբներն անցկացրին»[28]։

Ասորի պատմիչի նկարագրած խստությունները նույնությամբ վերաբերում էին նաև Հայաստանին։ Այստեղ բռնությունները հասան այն աստիճանի, որ Մուհամմադ իբն Մրուանը արգելեց ձկնորսությունը Վանա լճում, մինչդեռ նախապես միշտ ազատ է եղել։ Այս մասին վկայում է IX դարի աշխարհագրագետ Իբն ալ-Ֆակիհը. «Ինչ վերաբերում է Տաբեխի (Թիւռիխ) լճին, ասվա միշտ էլ նրանում թույլատրված է եղել [ձկնորսությունը], մինչև որ Մուհամմադ իբն Մարուան իբն ալ-Հաքամը, դառնալով Ջազիրայի ու Հայաստանի կառա-

---

24 Հովհաննես կաթողիկոս, էջ 120։

25 Դավիթը ծագումով պարսիկ էր, Սուրհան կոչված. գալով Հայաստան, նա քրիստոնեություն էր ընդունել Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի օրոք ու մկրտվել Դավիթ անվամբ։ Նրա նահատակության մասին վարքում հիշված 693 թ. (ի թուին Հայոց ՃԽԲ ի մարտի 31. Լիակատար վարք. Զ, էջ 228), բնականաբար, ճիշտ չէ։ Ի. Աբուլաձեն դնում է 703 թ. հունվարի 22-ին, Մ. Դարբինյան-Մելիքյանը՝ 704 թ. մարտի 31-ին (Դիտողություններ Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության վերաբերյալ. «Պատմա-բանասիրական հանդես», 1981 № 3, էջ 155, հատկապես՝ տողատակ 7), սակայն նախընտրելի է Մ. Օրմանյանի (Ազգապատում. Ա, էջ 777) 701 թ. ապրիլի 4-ը, քանի որ, ըստ պատմիչների, նահատակությունը կատարվեց նվաճումից անմիջապես հետո։ Հավանական է նույնիսկ 702 թ.։

26 Ղևոնդ, էջ 29։

27 Ph. Hitti. History of the Arabs, p. 217.

28 Chronique de Denys de Tell-Mahré. Paris, 1895, p. 10.

վարիչ, արգելեց ձկնորսությունը»[29]։ Նույնը կրկնում է XIII դարի պատմիչ Իբն ալ-Ասիրը, ավելացնելով. «Քանզի ով որ վատ օրենք է սահմանում, ինքն է պատասխանատու դրա համար, ինչպես նաև այն մարդկանց համար, որոնք շարունակում են այն պահպանել մինչև վերջին հարության օրը, իսկ նրանց պատասխանատվությունը ոչ մի բանով չի կարելի պակասեցնել»[30]։ Եթե մահմեդական պատմիչն այսքան վրդովված է, ապա ինչպիսի զայրույթ պետք է առաջացրած լիներ այս կարգադրությունը իր ժամանակին Վանա լճի շրջակա նահանգներում բնակվող ազգաբնակչության մեջ։

Այսպիսով, հարկային ծանր լուծը, տարբեր սեղմումները, կրոնական հալածանքը և նախարարների ու հեծելազորքի բնաջնջման ծրագիրը վրդովեցրին ժողովրդի բոլոր խավերին (նախարարներ, եկեղեցականներ ու գյուղացիություն)։

Ինչպես արդեն հիշվեց, 701 թ. արշավանքից հետո Մուհամմադը հեռացել էր Հայաստանից, իսկ Սմբատ Բագրատունին ու Սահակ Զորափորեցին ուղարկվել էին Դամասկոս[31]։ Ըստ երևույթին 702 թ., երբ խալիֆայությունը խիստ դժվարին դրության մեջ էր գահի հավակնորդ Աբդ ալ-Ռահման իբն Մուհամմադ իբն ալ-Աշասի հզոր ապստամբության պատճառով[32], Դամասկոսից վերադարձան Հայոց իշխանը և կաթողիկոսը։ Ահա այս խառնաշփոթ շրջանում, հավանաբար 702 թ. վերջերին էր, որ պետք է սպանված լիներ Հայաստանի (Արմինիայի) կառավարիչը (ոստիկանը), քանի որ Իբն ալ-Ասիրը վկայում է՝ «ասվում է, որ նրան սպանեցին ութսուներեք թվականին» (4 փետրվար 702—23 հունվար 703)[33]։

Ղևոնդը վկայում է, որ արաբ ոստիկանի նենգ ծրագիրն իր ժամանակին անմիջապես հայտնի էր դարձել Սմբատ Բագրատունուն, որը թեև նախկինում[34] կռվել էր Բյուզանդիայի դեմ, սակայն դաժան փորձով հասկացել էր Աբդ ալ-Մալիքի քաղաքականության էությունը։ Հայոց իշխանը նախարարաց գաղտնի ժողով հրավիրեց (հավանաբար իր տիրույթներում՝ Կոգովիտի Դարույնք ամրոցում)։ Եկել էին Աշոտի որդի Սմբատը, Թեոդորոս Ռշտունու որդի Վարդը, իր եղբայրն Աշոտը և այլ նախարարներ։ Այլ ելք չգտնելով, նախարարները որոշեցին հեռանալ դեպի հոռոմոց երկիրը[35]։ Անցան Մասիս լեռան հարավ-արևելյան կողմերով ու հասան Ակորի գյուղը։ Լսելով նախարարների հեռանալու լուրը, Նախճավանի արաբական 8 հազարանոց կայազորը սկսում է հետապնդել նրանց[36], իսկ նախարարների զորքը արդեն կանգ էր առել Արաքսի ձախ ափին գտնվող Վարդանակերտ գյուղում։ Նրանք արաբներին հայտնում են, որ ապստամբելու նպատակ չունեն, այլ պարզապես կամենում են հեռանալ, սակայն թշնամին չուզեց բանակցել, քանի որ 8 հազարի դիմաց 2 հազարանոց հայկական մի գունդ էր կանգնած։

---

[29] Kitab al-Boldan auctore Ibn al-Fakih. Bibl. Geogr. Arab. V, Lugd. Bat., 1885, p. 292.

[30] Ibn al-Athir. IV, p. 28. Իբն ալ-Ասիր, էջ 62։

[31] Հովհաննես կաթողիկոս, էջ 120։

[32] Տե՛ս J. wellhausen. Arab. kingdom and its fall. London, 1973, p. 232—248.

[33] Ibn al-Athir. IV, p. 84. Իբն ալ-Ասիր, էջ 65։

[34] J. Laurent. L'Arménie entre Byzance et l'Islam, p. 243—245.

[35] Ղևոնդ, էջ 34—35։ Ղևոնդը պատմում է, որ նախքան Արաքսի հովիտը գնալը նախարարները դիմեցին մի միայնակյացի Վասպուրականի Առեստակողմ կոչված վայրում, կարծիք հարցնելու, որը նախագուշակեց երկրի կորուստը և նախարարների կոտորածը, հանձնարարելով զգույշ լինել։

[36] Ըստ Մ. Չամչյանի այս կայազորի գլուխ էր կանգնած ոստիկան Աբդլլան, իսկ հայ նախարարները Բյուզանդիայից օգնական զորք ստանալով՝ հարձակվեցին ոստիկանի զորքի վրա, բոլորին կոտորեցին և միայն նա մազապուրծ ազատվեց կոտորածից (Պատմութիւն Հայոց. Բ, էջ 378)։

Ամբողջ գիշերվա ընթացքում հայոց զորքը ամրացրեց ավանի փողոցները։ Լուսաբացին հայերը պատրաստվեցին գունդ առ գունդ և կոտորեցին իրենց հետապնդող ռազմիկներին, որոնք գիշերվա ցրտին ձյան վրա թմրել էին։ Անապատի որդիները նետվեցին Արաքս գետը, որը սառած էր և սառույցը ջարդվելով նրանք ջրահեղձ եղան։ Հայոց զորքն այնպիսի ջարդ տվեց թշնամուն, որ 8 հազարից միայն 300 հոգի կարողացավ ճողոպրել և ապավինեց իշխանուհի Շուշանիկի ողորմածությանը։ Վեհանձն իշխանուհին հետապնդող Աշոտի որդի Սմբատին ու նրա ռազմիկներին համոզեց չկոտորել նրանց, վերքերը կապեց ու գրաստ տալով ուղարկեց խալիֆային։ Վարդանակերտի ճակատամարտը տեղի ունեցավ 703 թ. մոտավորապես հունվար-փետրվար ամիսներին[37]։ Այս սուհանդերձ, հաղթական ճակատամարտից հետո էլ նախարարները, հաստատ մնալով իրենց որոշման մեջ, հեռացան։ Նախ նվերներ առաքեցին Տիբերիոս կայսրին՝ արաբական նժույգներ և այլ բաներ։ Կայսրը կուրապաղատ տիտղոսը շնորհեց Սմբատ Բագրատունուն. այս բարեհաճ վերաբերմունքը ցույց է տալիս, որ նա հակաարաբական շարժման կողմնակից էր։ Սմբատը նախարարների հետ գնաց ու հաստատվեց Տայքի Թուխարք ամրոցում։

Հակառակ նախարարների այս խմբի հեռանալուն՝ շարժումը ապստամբության վերածվեց։ Ուշտունյաց գավառի Գուկանք գյուղում ապստամբ ժողովուրդը և ռազմիկները հարձակվեցին խալիֆայական կայազորի վրա և սրակոտոր արեցին նրանց։ Միայն 280 հոգի փախչելով ապաստանեցին մի եկեղեցի։ Ապստամբները կամեցան վառել նրանց եկեղեցու հետ, սակայն Վասպուրականի իշխան Աշոտի որդի Սմբատը չթողեց այդ ցանկությունն իրագործել։ Վերջապես, համոզելով կարողացան դուրս բերել նրանց և մինչև վերջին մարդը կոտորեցին[38]։ Նույնը կատարվեց նաև Վանանդ գավառում, ուր արաբ Օկբա (Ոգբայ) զորավարը իր գնդով շրջում էր և ահա Կամսարական իշխանը Վանանդի

---

37 Վարդանակերտի ճակատամարտի թվականը Սամվել Անեցու մոտ 9Բ (702) է (Հաւաքմունք ի գրոց պատմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 85), իսկ Դավիթ Բաղիշեցին (Մանր ժամանակագրություններ. Բ, Երևան, 1956, էջ 333) Վարդանակերտի և այլ դեպքերի մասին տալիս է ՃԾԱ 151 (4 հունիս 702—3 հունիս 703) թ.։ Թեոփանեսը ապստամբության համար տալիս է արարշագործության 6195 (703) թ., որը միաժամանակ Ասպիմարոսի (Տիբերիոս) 5-րդ տարին է, այսինքն դարձյալ 703 թ. (Թեոփանեսի ժամանակագրություն, թարգմ. Հ. Բարթիկյանի. ձեռ. էջ 97)։ Իբն ալ-Ասիրի մոտ (էջ 65) 84 թ. (24 հունվար 703—13 հունվար 704) Մուհամմադ իբն Մրուանի հարձակումը Հայաստան այս ապստամբությանն է վերաբերում։ Նոր ժամանակներում առաջինը Մ. Սեն Մարտենն է (Mémoires historiques et geographiques. I, Paris, 1818, p. 155), որ նշել է 703 թ., ապա՝ Ա. Մյուլլերը (История ислама. II, с. 91), Ժ. Լորանը (l'Arménie entre Byzance et l'Islam, p. 244), Մ. Օրմանյանը (Ազգապատում. Ա, 781), Բ. Առաքելյանը (Հայերի ապստամբությունը արաբական լծի դեմ 703 թ., էջ 55—62) և Հ. Նալբանդյանը (Արաբացի ոստիկանները Հայաստանում, էջ 107)։ Սակայն Ժ. Լորանի և Հ. Նալբանդյանի այն ենթադրությունը, թե ճակատամարտը 703-ի դեկտեմբերին է տեղի ունեցել (կամ տարվա վերջին), անհավանական է, որովհետև Հայաստանում դեկտեմբերին ջուրը չի սառչում, իսկ հունվարին ու փետրվարին դա հնարավոր է։ Առաջինը Մ. Օրմանյանն է առաջարկել 703-ի հունվարը, որը կրկնում է նաև Լեոն (Հայոց պատմություն. Բ, էջ 372)։ Ինչ վերաբերում է Շուշան տիկնոջը, ապա տեղեկություն կա այն մասին, որ 705 թ. նախճիրից հետո, նրա վեհանձնությունը «վարձատրվեց» նրանով, որ արաբ նվաճողները քշեցին նրան Խառան, ուր ստիպեցին ուրանալ քրիստոնեական հավատը, սակայն Շուշանն անդրդվելի մնալով՝ տանջամահ եղավ 706-ին։ Երբ նրա նահատակության լուրը հասավ եղբորը՝ Գագիկ Կամսարականին, որը ավարտելու վրա էր Վարդանակերտ գյուղում հաղթանակի հիշատակին կառուցվող եկեղեցին, այդ եկեղեցու նավակատիքի հանդեսին միացրեց իր վկայուհի քրոջ տոնական հիշատակը (Մ. Չամչեան. Պատմութիւն Հայոց. Բ, էջ 382։ Ղ. Ալիշան. Այրարատ. Վենետիկ, 1890, էջ 56։ Մ. Օրմանեան. Ազգապատում. Ա, էջ 807։ Հ. Աճառյան. Անձնանունների բառարան. Դ, Երևան, 1948, էջ 181)։

38 Ղևոնդ, էջ 26—28։

աղատների զորքով հարձակվեց ու խսպառ կոտորեց նրա զորամասը, իսկ զորավարը մաղապուրծ փախավ Ասորիք՝ եղելության մասին հաղորդելու ամիրապետին[39]։ Վերջինս անմիջապես զորք ուղարկեց Հայաստան Մուհամմադ իբն Մրուանի գլխավորությամբ. արշավին մասնակցում էր նաև Օկբան։ Թեև Հովհաննես Դրասխանակերտցին Օկբային է համարում զորքի հրամանատար, սակայն Իբն ալ-Ասիրի վկայությունը, թե Մուհամմադը 84 (24 հունվար 703—13 հունվար 704) թ. արշավեց Հայաստան, աներկբայելի է դարձնում Ղևոնդի տեղեկությունը, որ Մուհամմադն էր հրամանատարը[40]։ Իրոք, 703-ին վերջինս արշավանքի պատրաստվեց, սակայն ճանապարհին նրան կանգնեցրեց Սահակ կաթողիկոս Զորափորեցու պատվիրակությունը[41]։

Բանն այն է, որ նախարարները, տեսնելով արաբական վրեժխնդիր զորքի գալուստը, առաքեցին Սահակ կաթողիկոսին, որպեսզի դիվանագիտությամբ կանգնեցնի արաբ զորավարին։ Հավանաբար սրանք այն նախարարներն էին, որոնք չէին մասնակցել ապստամբությանը։ Ղևոնդը նկարագրում է Սահակ Զորափորեցու երթը Հայաստանի միջով, քանզի արդեն վերադարձել էր Դամասկոսից։ Ճանապարհ ընկնելով մեր երկրի միջով («Եւ իբրև յուղարկեցաւ յաշխարհէս»), նա և ընկերակից եպիսկոպոսները հասան Խառան։ Զգալով մահվան մերձենալը, նա մի ազդու գրություն թողեց, որ հանձնեն Մուհամմադ զորավարին։ Վերջինս գալով կարդաց հանգուցյալի գրությունը, որտեղ Սահակ Զորափորեցին իր ազգի կողմից խնդրում էր ետ պահել սուրը արյունահեղությունից, տալ հավատի ազատություն՝ հրաժարվելով հավատափոխության պահանջից և փոխարենը խոստանում էր, որ հայ ժողովուրդը հնազանդ կլինի[42]։ Մուհամմադն ինչ-ինչ նկատառումներով[43] ընդառաջեց այս յուրօրինակ խնդրանքին և հանգուցյալի ուղեկիցներին գրավոր պայմանագիր տվեց («բան երդման ի ձեռն գրոյ»), իսկ Հայաստանում այս գրավոր երդմնագիրը տեսնելով հանգստացան[44]։

Այս պայմանագիրը, որ խալիֆայության ներկայացուցիչը տվեց հայ եկեղեցուն, ապահովում էր միայն հավատի հանդուրժելիությունը և հավանաբար նաև հայ եկեղեցու որոշ իրավունքներ, սակայն չէր վերաբերում հայ նախարարների հողատիրական ժառանգական իրավունքներին, որի համար մի քանի տարի անց հատուկ պայմանագիր տրվեց։ Հովհաննես Դրասխանակերտցու «նամակ ի նախարարս Հայոց դրեալ» արտահայտությունը չի նշանակում, թե նախարարների իրավունքները շոշափվել են։

Այնուհետև Ղևոնդն ավելացնում է. «Աբդլ-Մելիք իշխանի տասնութերորդ տարում (իմա՝ 703 թ.—Ա. Տ.-Ղ.) Մահմետ զորավարը երկրորդ անգամ եկավ

---

39 Հովհաննես կաթողիկոս, էջ 121—122։

40 Ղևոնդ, էջ 28։

41 Նույն տեղում, էջ 28—31։

42 Նույն տեղում, էջ 29։

43 Բանն այն է, որ 703-ին Աբդ ալ-Ռահմանի ապստամբությունը դեռ լրիվ չէր ջախջախվել, նա սպանվեց միայն 704 թ.։ Լեռն գտնում է, որ խալիֆայության այս զիջումը հետևանք էր այն բանի, որ Աբդ ալ-Մալիքն իր կյանքի վերջում հանդուրժող էր քրիստոնյաների նկատմամբ (Լեռ. Հայոց պատմություն. Բ, էջ 374—375)։

44 Սահակ Զորափորեցու առաքելությունն այլ ձևով է ներկայացված Հովհաննես Դրասխանակերտցու մոտ։ Ըստ նրա կաթողիկոսը դեռ Դամասկոսում էր, երբ լսեց եղելությունը և եկավ Խառան աղետի առաջն առնելու նպատակով։ Հիվանդանալով ու զգալով իր մոտալուտ մահը, մի գրություն թողեց Օկբա զորավարին հանձնելու համար և պատվիրեց իր աջ ձեռքում դնել այն, երբ ինքը դագաղում լինի։ Օկբան մտնում է նրա մոտ և արաբերեն ողջունում է՝ սելամ ալեք (ողջույն քեզ)։ Հանգուցյալն իր ձեռքը մեկնելով տալիս է նամակը։ Զորավարը, ազդված այս բոլորից, նամակն ընթեռնելով ընդառաջում է գրության մեջ եղած խնդրանքին ու տալով հայ նախարարներին ուղղված նամակ՝ պատվով ետ է ուղարկում հանգուցյալի ուղեկիցներին (Հովհաննես կաթողիկոս, էջ 122—124)։

Հայոց աշխարհը և երեք[45] տարի հանդարտ սպասեց և ոչ ոք մի վատ բան չէր հիշեցնում այն անցքերի մասին, որոնք պատահեցին տաճկաց զորքի հետ Վարդանակերտ ավանում, այլ հաստատուն էր պահում այն գրավոր երդումը, որ ինքն էր տվել և միայն թաքուն հետևում էր Հայաստանի նախարարներին։ («Իսկ Մահմետ զօրավարն երկրորդ անգամ ելեալ յաշխարհս Հայոց զօրու ծանու յութուտասաներորդ ամի Աբդլ-Մելիք իշխանի և գամս Գ հանդարտեալ դադարէր. և ոչ ինչ չարեաց յուշ լինէր վասն անցիցն որ էանց ընդ զօրն Տաճկաց ի Վարդանակերտն աւանի. այլ հաստատուն պահէր զերդումն գրոյն զոր տուեալ էր իւր և միայն ընդ ակամբ հայէր նախարարացն Հայոց»)[46]։ Սա մասամբ հաստատվում է Իբն ալ-Ասիրի խոսքերով. «Այդ տարում (85 հիջրի—704 թ.) Մուհամմադ իբն Մարուանն արշավեց Հայաստան և այնտեղ անցկացրեց ամառն ու ձմեռը»[47]։

Վերջերս հայտնի դարձավ X դարի մի արաբ պատմիչի բազմահատոր մատյանը[48] (Քիտաբ ալ-ֆուտուհ՝ Գիրք նվաճումների), որը հետաքրքրական տեղեկություններ է պարունակում Հայաստանի մասին։ Հեղինակը Մուհամմադ իբն Աբդուլլահ իբն Ասասմ ալ-Քուֆին է[49], որի կենսագրությունից այնքանը գիտենք, որ մահացել է մոտավորապես 926 թ.։ 703-ի ապստամբության մասին նա գրում է. «Ջազիրայի, Հայաստանի ու Ատրպատականի և այնտեղ պատահած պատերազմների մասին։

Ապա Աբդ ալ-Մալիք իբն Մարուանը կանչեց իր եղբորը՝ Մուհամմադ իբն Մարուանին և հրաման արձակեց նրան Ջազիրայի, Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ նշանակելու մասին և մեծ զորք տվեց նրան։

Մուհամմադ իբն Մարուանը զորքով դուրս եկավ Ասորիքից (Շամ) իր հետ ունենալով Մասլամա իբն Աբդ ալ-Մալիք իբն Մարուանին, մինչև որ հասավ Ջազիրայի հողը։ Հետո կանչեց իր զինակիցներից մեկին, որ կոչվում էր Աբդալլահ իբն Աբու Շայխ ալ-Ասուիյ և Ասորիքի զորքից նրան տաս հազար ռազմիկ տալով՝ հրամայեց մտնել Հայաստան երկիրը, կռվելու այնտեղ եղած խազարների ու տարբեր անհավատների դեմ։

Աբդալլահ իբն Աբու Շայխը իր զորքով եկավ ու մտավ Հայաստան երկիրը և նրա ժողովուրդը իմանալով այդ մասին մահմեդականների դեմ համախմբվեց մեծ բազմությամբ (զորքով), որը հարյուր հազարից ավելի էր. կոտորեց բոլորին այնպես, որ ոչ ոք չփրկվեց, ապա վերցրեց նրանց ունեցվածքը և ունեցվածքը. վերցրեց ամեն ինչ, որ կար նրանց մոտ»[50]։

Քուֆիի տեղեկությունների մեջ առաջին հերթին մեզ հետաքրքրում է արաբ զորավարի կամ կառավարչի՝ Աբդալլահ իբն Աբու Շայխի անունը, որը, ինչպես Իբն ալ-Ասիրի մոտ տեսանք, Աբու Շայխ իբն Աբդալլահ է, իսկ հայկական աղբյուրներում, սկսած Հովհաննես Դրասխանակերտցուց, հիշվում է պարզապես Աբդալլա ձևը, որը համապատասխանում է Քուֆիի բնագրին։ Իր ժամանակին Հ. Նալբանդյանը, հարցը լուծելու համար ենթադրել էր, որ հայ պատմիչների հիշած Աբդալլան և Իբն ալ-Ասիրի Աբու Շայխ իբն Աբդալլահը տարբեր անձնավորություններ են[51]։ Սակայն մեզ թվում էր, թե այս երկու ձե-

---

45 Մուհամմադի երեք տարի Հայաստանում հանդիստ մնալն անհավատալի է, քանի որ Նախճավանի դեպքերը (ինչպես կտեսնենք) անկասկած 705 թ. տեղի ունեցան։ Դուցե դրանից հետո էլ նա մնաց Հայաստանում և այդ դեպքում 3 տարին մասամբ հասկանալի կդառնա։

46 Ղևոնդ, էջ 31։

47 Ibn al-Athir. IV, p. 102. Իբն ալ-Ասիր, էջ 66։

48 Kufi. Kitab al-Futuh. I—VIII, Haydarabad, 1968—1975. Հրատարակվել է ըստ Գոթայի (Գերմանիա) և Կոստանդնուպոլսի ձեռագրերի։

49 C. Brockelmann. Geschichte der Arabischen Litteratur. Supplementband, Leiden, 1937, I, S. 220. F. Sezgin. Geschichte des Arabischen Schrifttums. I, Leiden, 1967, 309.

50 Kufi. Kitab al-Futuh. VI, p. 293.

51 Հ. Նալբանդյան. Արաբացի ոստիկանները Հայաստանում, էջ 107։

վերը մեկ անձնավորության անվան աղավաղումներն են[52]։ Այժմ Հ. Նալբանդյանի տեսակետը պետք է նորից արժեքավորվի Քուֆիի տվյալներով։

Բանն այն է, որ ըստ Քուֆիի հիշյալ զորավարը ոչ թե տեղում էր գտնվում ապստամբության ժամանակ, ինչպես հայկական աղբյուրներն ու Իբն ալ-Ասիրն են վկայում, այլ ապստամբության լուրն առնելուց հետո է Մուհամմադն ուղարկում նրան։ Ուստի կարելի է ենթադրել (վերապահությամբ), որ Իբն ալ-Ասիրի հիշած Աբու Շայխ իբն Աբդալլահը եղել է ոստիկան (կառավարիչ), իսկ հայ պատմիչների ու Քուֆիի հիշած Աբդալլահ իբն Աբու Շայխը մի զորավար է, որին ուղարկել էին Հայաստան։

Ուշագրավ է այն նորությունը, թե հայերը, հարյուր հազար հոգով (բազմությամբ) հարձակվում ու կոտորում են ամբողջ արաբական զորքը, այնպես որ ոչ ոք չի փրկվում։ Եթե այդպես է, ուրեմն սպանվում է նաև Աբդալլահ իբն Աբու Շայխը։ Սա համապատասխանում է Իբն ալ-Ասիրի տեղեկությանը, թե հայերը սպանեցին կառավարչին։ Հայկական աղբյուրները չեն հիշում, թե Աբդալլան սպանվեց, իսկ Մ. Չամչյանը, հայտնի չէ ինչ աղբյուրից քաղելով, գրում է (Վարդանակերտում արաբների կոտորվելը հիշելու առիթով). «և զերծաւ միայն Աբդլլայ ոստիկան քանի մի արամբ»[53]։ Թեոփանեսը ևս այնպես է նկարագրում 703-ի ապստամբությունը, որ թվում է, թե հայերը բոլոր արաբներին իսպառ կոտորեցին. «Այդ տարի հայոց նախարարները սարակինոսների դեմ ապստամբեցին և Հայաստանում եղած սարակինոսներին կոտորեցին»[54]։ Քուֆիի հիշած հայերի հաղթանակը, բնականաբար, արձագանք է Վարդանակերտում և, մասամբ, Ուշտունիքում ու Վանանդում արաբների կրած պարտությունների թողած տպավորության։

Ինչպես արդեն նշեցինք, 703 թ. ապստամբությունից հետո ներխուժող արաբական զորքը արյունահեղություն չգործեց (ժամանակավորապես) Սահակ Զորափորեցու միջամտության շնորհիվ, սակայն արաբական իշխանությունները հետևում էին հայ նախարարներին և միայն առիթի էին սպասում իրագործելու իրենց վրեժխնդրության ծրագիրը և այդ առիթը տրվեց։

705 թ. աքսորից վերադարձավ և կայսերական իշխանությանը կրկին տիրացավ Հուստինիանոս II-ը։ Թուխարք ամրոցում գտնվող Սմբատ Բագրատունին անմիջապես նամակագրեց և օգնություն խնդրեց արաբական տիրապետության տակ գտնվող Հայաստան արշավելու համար։ Հուստինիանոսը տրամադրեց 50 հազարանոց զորք մի զորավարի գլխավորությամբ և Սմբատը նրա հետ մտավ Վանանդ գավառն ու բանակ դրեց Դրաշպետ գյուղի մոտ։ Սակայն նրանց դեմ դուրս եկավ Մուհամմադ իբն Մրուանը, որը Հայաստանում էր և հաղթելով, կոտորեց հույն և հայ ռազմիկների մեծ մասին, իսկ ինքը վերադարձավ Դվին[55]։

Խալիֆայությունն այլևս առիթը բաց չթողեց։ Մուհամմադը հրաման ստացավ շուտափույթ իրագործել հայ նախարարներին բնաջնջելու հին ծրագիրը։ Նա իր ստորադրյալ Կասիմին հրամայեց հրավիրել հայ նախարարներին, պատճառաբանելով, թե պետք է հաշվառում կատարվի և հայոց այրուձիուն ռոճիկ (հոգ) տրվի, սակայն հենց որ վերջիններս ժամանեցին, նրանց զինաթափ արեցին ու ձերբակալեցին[56], ընդ որում մի մասին մտցրեցին Նախճավանի եկեղեցին, իսկ մյուս մասին՝ Խրամի եկեղեցին[57]։ Արաբները հրկիզեցին

---

52 Ա. Տեր-Ղևոնդյան. Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը. «Պատմաբանասիրական հանդես», 1977, № 1, էջ 119։

53 Մ. Չամչեան. Պատմութիւն Հայոց. Ա, էջ 378։

54 Թեոփանես (ձեռագիր թարգմ.), էջ 97։

55 Ղևոնդ, էջ 32։

56 Նույն տեղում, էջ 33։

57 Ըստ Մովսես Կաղանկատվացու և նրան հետևող այլ պատմիչների, Նախճավանում զոհվեց 800 հոգի, իսկ Խրամում 400 (Պատմութիւն, էջ 367)։ Ղևոնդն ու Հովհաննես Դրասխանակերտցին նման թվեր չեն հիշում։

եկեղեցիների փայտակերտ ծածկը («առաստաղ փայտակերտ եկեղեցւոյն») և վառվող դերանների հետ շիկացած կղմինդրը («հրացեալ կղմինդրն») թափվեց նախարարների գլխին ու ծխախառն կրակը ողջակեզ արեց նրանց[58]։ Մի խումբ մեծամեծ նախարարների կապանքների մեջ տանջելով՝ պահանջեցին հարստություն (ոսկի ու արծաթ), երդմամբ խոստանալով ազատ արձակել, սակայն կողոպտելուց հետո փայտից կախելով նրանց ևս սպանեցին[59]։ Նախճավանում ու Խրամում զոհվեց Բագրատունի տոհմից Աշոտի որդի Սմբատը. Արծրունի տոհմից Գրիգորն ու Կորյունը, Ամատունյաց տոհմից Վարազ Շապուհն ու եղբայրը և բազում այլ նախարարներ[60]։ Այս դեպքերից հետո հրկիզյալների ընտանիքները տարան Դվին և ապա գերեվարեցին Դամասկոս[61], իսկ նրանց կալվածները կողոպտեցին[62]։

Հետաքրքրական են Քուֆիի տեղեկությունները 705 թ. արյունալի դեպքերի վերաբերյալ։ Ապստամբության մասին պատմելուց հետո անմիջապես շարունակում է. «Այս լուրը հասավ Մուհամմադ իբն Մարուանին, որը տխրեց մահմեդականների հետ կատարվածի մասին և խիստ նեղվեց։ Ապա կանչեց զորքը և անձամբ քառասուն հազարով շարժվեց։ Երբ Հայաստան երկրի խորքերը հասավ, հոռոմներն ու հայերը մեծ բազմությամբ նրա դեմ դուրս եկան և Մուհամմադ իբն Մարուանը կատաղի կռիվ մղեց նրանց դեմ, այնքան, որ վախեցավ, թե կպարտվի ու կխայտառակվի, քանզի անհավատները (քուֆֆար) մեծ թվով էին հավաքվել նրա դեմ։ Սակայն ալլահը պարտության մատնեց հեթա-

---

58 Հովհաննես կաթողիկոս, էջ 125։

59 Ղևոնդ, էջ 34—35։

60 705 թ. արյունալի դեպքերի թվականի մասին հայկական աղբյուրները տարբեր վկայություններ ունեն։ Վարդանի մոտ «ի հարիւր յիսուն թուականին» (Պատմութիւն տիեզերական. Մոսկվա, 1861, էջ 99), այսինքն՝ 701, Հայսմավուրքում (Յայսմաւուրք, մարտ 28)՝ «ի ՃԾԲ թվին Հայոց», այսինքն՝ 703 թ., Հովհաննես Դրասխանակերտցու մոտ՝ «յետ ութսուն և հինգ թուականին իւրեանց» (էջ 124), այսինքն՝ 704 թ.։ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը (էջ 125) ունի ՃԾԳ (153), դարձյալ 704 թ., որն ըստ տոմարական հաշիվների համապատասխանում է 3 հուլիս 704—2 հուլիս 705 հուլյան տոմարով (Հ. Բ ա դ ա լ յ ա ն. Օրացույցի պատմությունը. Երևան, 1970, էջ 326) կամ 16 հուլիս 704—15 հուլիս 705 Դրիգորյան տոմարով։ Մ. Չամչյանը (էջ 381) ՃԾԳ (153) թվականը ձևական (սոսկ 551 դումարելով) հաշվով տալիս է 704 թ.։ Նույնը կրկնում է Մ. Սեն Մարտենը (Memoires historiques et géographiques. I, Paris, p. 416)։ Ղ. Ալիշանը հիշում է 705 թ. (Այրարատ, էջ 562), Լեոն՝ 706 (Հայոց պատմություն. Բ, էջ 375), Ժ. Լորանը՝ 705 (L'Arménie entre Byzance et l'Islam, 244), Ռ. Գրուսեն՝ 705/706 (R. Grousset. Histoire de l'Arménie. Paris, 1947. p. 313) իսկ Հ. Նալբանդյանը՝ 705-ի կես (Արաբացի ոստիկանները Հայաստանում, էջ 198)։ Սակայն Ղևոնդը հստակ կերպով վկայում է, որ դա տեղի ունեցավ Հուստինիանոսի վերադարձից ու Վալիդի գահակալությունից անմիջապես հետո։ Արդ, ըստ հույն պատմաբան Ա. Ստրատոսի (տե՛ս Ἀνδρέα Ν. Στράτου. Τὸ Βυζάντιον στὸν Ζ' αἰῶνα. Τόμος ΣΤ; Ἀθῆναι, 1977, σελ.. 130. Բյուզանդիան 7-րդ դարում. Զ. Աթենք, 1977, էջ 130։ Այս տեղեկությունը մեզ հաղորդել է Հ. Բարթիկյանը) Հուստինիանոսը աքսորից վերադարձավ ու գրավեց գահը 705 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, իսկ կրկին օծվեց Վալիդ խալիֆայի գահակալության առաջին օրերին։ Վալիդը իշխանության գլուխ անցավ 10 հոկտեմբերի 705 թ. (շավվալ ամսի կեսին 86 հիջրի թ., Yaqubi, Tarikh. II, 283)։ Ուստի Սմբատը կարող էր Հուստինիանոս II-ից օգնություն ստանալ և հարձակվել հենց 705 թ. ամռան վերջին և Նախճավանի ու Խրամի դեպքերը, որոնք անմիջապես հաջորդեցին դրան, կարող էին տեղի ունենալ աշնանը (նոյեմբերին)։

61 Հովհաննես կաթողիկոս, էջ 125։

62 Վկայաբանութիւն Վահանայ Գողթնացւոյ. «Սուրբք Հայկականք», ԺԳ։ Գերեվարվածների մեջ հատկապես հիշվում է Գողթնի իշխան Խոսրովի որդի Վահան Գողթնացին, որը հետագայում վերադառնալով հայրենի երկիրը, կրկին դավանեց նախնիների քրիստոնեական հավատը և նահատակվեց։

նոսներին (մուշրիքին) և մահմեդականներին հնարավորություն տվեց հաղթել նրանց և շատերին կոտորեցին ու գերեվարեցին, գրավելով նրանց երկիրը և ունեցվածքը[63]։

Դրանից հետո Մուհամմադ իբն Մարուանը լուր ուղարկեց նրանց մեծամեծներին ու ազատներին (ահրար), խոստանալով իր կողմից բարիքներ (բարյացակամություն) և թե ինքը կտա նրանց ինչ կամենան և կառավարիչ կնշանակի ում կամենան։ Նա համոզեց նրանց մինչև որ հավատացին ու վստահեցին նրան և հավաքվեցին նրա մոտ։ Նա որոշ հարցերի շուրջը (որոշ պայմաններով) նրանց հետ համաձայնության եկավ (հաշտություն կնքեց) ու գոհացրեց նրանց։

Ապա ասաց՝ ես ձեզ չեմ վստահում, ուստի պետք է մտնեք ձեր այս եկեղեցիները և ինձ երդվեք այնպես, ինչպես որ երդվեցնել տամ ձեզ, այն բանի համար, որ դուք ձեր խոստացած պարտավորությունները չեք դրժի։ Ապա ինձ պատանդներ կտաք ու կգնաք ձեր երկիրը։ Նրանք համաձայնեցին ու մտան եկեղեցիները երդվելու։ Սակայն երբ իմացավ, որ բոլորը հավաքվել են եկեղեցիներում, դռները նրանց վրա փակել տվեց և եկեղեցիները ներսում եղածների հետ միասին նավթի կրակով վառվեցին։ Այդ եկեղեցիները մինչև օրս կոչվում են վառվածներ (մուհտարիկա)»[64]։

Քուֆիի նման նախորդ արաբ պատմիչները ևս միացնում են 703-ի ապստամբությունը 705-ի դեպքերի հետ, իհարկե բոլորովին շփոթելով ժամանակները։ Այսպես, Բալազուրին (մեռ. 892 թ.) վկայում է. «Երբ Իբն ալ-Զուբայրի խռովությունը սկսեց, Հայաստանն ապստամբվեց[65] և նրա ազատներն (ահրար) ու նրանց հետևորդներն ըմբոստացան։ Երբ Մուհամմադ իբն Մարուանն իր եղբոր Աբդ ալ-Մալիքի կողմից Հայաստանի (Արմինիայի) կառավարիչ նշանակվեց, նրանց դեմ կռվեց ու հաղթեց, կոտորեց, գերեվարեց և երկիրը հնազանդեցրեց։ Ապա ողջ մնացած [ազատներին] խոստացավ պատիվներ տալ ու նրանք հավաքվեցին Խլաթ (Խրամ) գավառի եկեղեցիներում և նա փակել տալով դռներին պահապաններ նշանակեց ու վախեցրեց»[66]։ Գրեթե նույնը կրկնում է Յակուբին (մեռ. 897 թ.), մոտավորապես 73 (692/693) թ. տակ խոսելով Մուհամմադի գործունեության մասին. «Ապա արշավեց Հայաստան, որի ժողովուրդն ապստամբել էր։ Նա կոտորեց ու գերեվարեց և նամակ գրեց երկրի աղնվականներին (աշրաֆ), որոնք ազատներ (ահրար) են կոչվում, երաշխավորագիր տվեց ու խոստացավ պատվի բարձրացում։ Ուստի նրանք հավաքվեցին եկեղեցիներում, Խլաթի (Խրամի) նահանգում, իսկ նա հրամայեց վառելափայտ հավաքել եկեղեցիների շուրջը, նրանց վրա փակել տվեց դռները և

---

63 Հավանաբար Մուհամմադի և հայերի ու հոռոմների միջև ճակատամարտի մասին տեղեկությունը Դրաշպետի ճակատամարտի արձագանքն է, քանի որ Դրաշպետում էլ հայեր և հոռոմներ Սմբատ Բագրատունու հետ կռվում էին արաբների դեմ։ Սակայն դա ոչ թե ապստամբությանը հաջորդեց, այլ երկու տարի անց տեղի ունեցավ։ Նույն շփոթությունը կա նաև Մովսես Կաղանկատվացու մոտ, որը Մուհամմադի 701 թ. արշավանքը հիշելուց անմիջապես հետո ավելացնում է՝ «հար զհոռոմն սպայն և զհայն», ապա նշում է, որ Մուհամմադը հավաքեց հայ նախարարներին ու վառեց (Մովսես Կաղանկատվացի, էջ 366)։

64 Kufi. Kitab al-Futuh. VI, p. 294—295.

65 Բալազուրիի մոտ մեծ շփոթություն կա։ Բանն այն է, որ Աբդալլահ իբն Զուբայրը ապստամբել է 680 թ., երբ իրոք Հայաստանը ևս ապստամբեց, սակայն դա ոչ մի առնչություն չունի 703-ի շարժման հետ։ Իսկ Մուհամմադը Հայաստանի և այլ երկրների կառավարիչ նշանակվեց 693 թ. և իբր այդ տարում է նա վառել հայ նախարարներին։

66 Beladsori, p. 205. Նկատի ունենալով, որ Յակուբիի մոտ հստակորեն ասվում է, թե Մուհամմադը «վառեց», ապա Բալազուրիի մոտ վախեցրեց (خوّفهم) բառի մեջ գրչական սխալ կա. պետք է լինի, ինչպես Յակուբիի մոտ՝ حرّقهم մի քանի կետի փոփոխությամբ։

ամենքին վառեց»[67]։ Պատմիչ Աբու-լ-Մահասին իբն Տաղրի Բիրդին (1411—1469) 84 (703/704) թ. տակ գրում է. «Այդ տարում Մուհամմադ իբն Մարուանը արշավեց Հայաստան ու պարտության մատնեց նրանց (հայերին), ապա վառեց նրանց եկեղեցիները և սա կոչվում է կրակի (հրդեհի) տարին (սանատ ալ-հարիկ)»[68]։ Բյուզանդացի պատմիչ Թեոփանեսը (մեռ. 818 թ.) ևս ապստամբությունը միացնում է 705-ի դեպքերին։ Ապստամբության մասին հիշելուց հետո նա անմիջապես ավելացնում է. «Նրանք հապճեպ Ապսիմարոսին դիմեցին և հռոմայեցիներին իրենց երկիրը բերեցին։ Մուհամմադը, արշավելով նրանց դեմ, շատերին կոտորեց, Հայաստանը սարակինոսներին հպատակեցրեց, իսկ հայոց մեծամեծներին մի տեղ հավաքելով, ողջակեզ արեց»[69]։

Քուֆիի մոտ կա մի հետաքրքրական տեղեկություն ևս։ Ի տարբերություն արաբ և հայ պատմիչների այն վկայության, թե արաբները, հրավիրելով հայ նախարարներին, ստիպեցին եկեղեցիները մտնել և այնտեղ վառեցին նրանց, Քուֆին վկայում է, որ նրանց համոզեցին, որ մտնեն եկեղեցիները երդվելու համար և ապա դռները փակեցին։ Հայ վարքագրական գրականության մեջ այս փաստը հիշվում է։ Վահան Գողթնացու «Սոփերք Հայկականք» մատենաշարում հրատարակված երկրորդ վարքում հիշվում է. «Ի զինուորական զինուցն ունայնս առնէին և յաղօթարան ժողովէին ի տուն տեառն, որպէսզի երդումն արասցեն կալ հաստատուն ի միամտութեան բռնակալին տէրութեանն»[70]։ Մ. Ավգերյանի հրատարակած մատենաշարում նույնը կրկնվում է ավելացվելով. «...և անդէն զդրունսն ի վերայ ածեալ փակեցին»[71]։ Հայսմավուրքում ևս Վահան Գողթնացու վկայաբանության մեջ վկայված է. «...զորոց զզէնս առին նենգութեամբ և զնոսա յեկեղեցիս մուծին առ ի տալ երդումն հաւատարիմ մնալ ընդ տէրութեամբ տաճկաց»[72]։

Այս ողբերգական դեպքերից հետո հայկական Տայք նահանգի Թուխարք ամրոցն ապաստանած նախարարները հայրենիք վերադառնալու հույսը կորցնելով՝ Հուստինիանոս կայսրից իրենց համար բնակավայր և իրենց ոչխարների հոտերի համար արոտավայր խնդրեցին, իսկ կայսրը նրանց հատկացրեց Փուլթ (Փոթի) քաղաքը, ուր նրանք 6 տարի ապրեցին[73]։

703 թ. ապստամբությունը, որն ուղղված էր խալիֆայության դաժան քաղաքականության դեմ և համաժողովրդական ընդվզում էր, թեև արյան մեջ խեղդվեց, այսուհանդերձ ունեցավ իր որոշակի նշանակությունը, քանզի Վալիդ

---

[67] Yaqubı. II, 272. Իրար ժամանակակից երկու պատմիչների (Բալաղուրի և Յակուբի) մոտ էլ Խրամ անունը գրչական աղավաղման է ենթարկված, դառնալով Խլաթ։

[68] Abu-l-Mahasın Ibn Taγhrı Birdi. al-Nujum al-Zahira, I, Qahira, 1929, p. 207.

[69] Զարմանալի է, որ թե՛ Քուֆիի, թե՛ Թեոփանեսի մոտ հայերը 703 թ. դիմում և օգնություն են ստանում Բյուզանդիայից։ Վերջինս նույնիսկ հիշում է Ապսիմարոսի անունը։ Բանն այն է, որ, ինչպես տեսանք, Մ. Չամչյանն էլ նույնն է վկայում։ Սա մի անորոշ հարց է։

[70] Սոփերք Հայկականք. ԺԳ, էջ 63։

[71] Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց. Ա. էջ 191։

[72] Յայսմավուրք, մարտ 28։

[73] Ղևոնդ, էջ 35։ Կուզենայինք շեշտել, թե շատ կարևոր է այն պարագան, որ հայ պատմագրության էջերում պակասող և միայն վարքագրական գրականության մեջ հիշված փաստը հաստատվում է պրաբ պատմիչի վկայությամբ։ Դժբախտաբար մեր պատմագրության մեջ վարքագրական նյութերի հանդեպ որոշ տարակուսանք կա և նույնիսկ Մ. արք. Օրմանյանի նման հեղինակը, որը հարկավ չէր թերագնահատի վարքագրության արժեքը, 705 թ. դեպքերի մասին պատմելիս վարանելով գրում է, թե նախարարներին մտցրեցին եկեղեցիները «թերևս հավատարմության երդումի պատրվակով», վկայակոչելով միայն Մ. Չամչյանին (Ազգապատում. Ա, էջ 803)։ Վարքերը, վկայաբանությունները ու Հայսմավուրքը լրջորեն հետազոտվելու դեպքում կարող են շատ կարևոր պատմական նյութեր հայթայթել։

խալիֆայի իշխանության տարիներին (չնայած առաջին տարում կատարված արյունալի դեպքերին) փոխվեց Օմայանների քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, որի դրդապատճառներից մեկն աներկբայորեն հենց 703 թ. ապստամբությունն էր։

ВОССТАНИЕ 703 г. В АРМЕНИИ ПРОТИВ ХАЛИФАТА

Доктор ист. наук А. Н. ТЕР-ГЕВОНДЯН

(Резюме)

С 693 по 701 гг. Византия и арабский халифат вели упорную борьбу за Армению. В 701 г. брат халифа Абд ал-Малика—Мухаммад ибн Марван завоевал страну; вместе с Картли, Алуанком, Ширваном и Дарбандом она составила провинцию *Арминия,* столицей которой был Двин. Тяжелое бремя налогов и жестокое отношение к нахарарам (феодалам) и церкви Армении стали причиной восстания 703 г. Восставшие, по сообщению Ибн ал-Асира (XIII в.), убили арабского правителя *Армении.* В восстании важную роль играл патрикий (ишхан) Армении Смбат Багратуни.

Восстание 703 г. в Армении—известное событие в истории армянского средневековья, однако новые материалы сделали необходимым пересмотр подробностей этого исторического события. В последние годы было впервые издано сочинение арабского историка X в. Куфи, которое содержит интересные сведения по истории Армении. Армянские историки Гевонд, Ованнес Драсханакертци и другие сообщают о том, что в разных областях Армении восставшие армяне перебили арабские гарнизоны. Однако Куфи свидетельствует о большом сражении между отрядами восставших и арабов после того, как арабские карательные войска вторглись в Армению. По сообщению Куфи, жители страны выставили против мусульман огромное число людей—более ста тысяч человек, и перебили мусульман (Куфи, Китаб ал-футух, VI, с. 294). Халиф Абд ал-Малик отправил войска для подавления восстания, однако благодаря посредничеству католикоса Саака Дзорапореци удалось приостановить кровопролитие.

Два года спустя Смбат Багратуни, находившийся в изгнании, совершил нападение на арабскую *Арминию,* но византийские и армянские (*ал-рум* и *ал-арман*) войска были разбиты. Рассказывая об этом сражении, Куфи подчеркивает, что победа войск халифата была нелегкой, так как их полководец (Мухаммад ибн Марван) в течение битвы «боялся опозориться и оказаться побежденным». После этих событий халиф решил истребить крупных феодалов Армении. Арабский полководец пригласил их в Двин, пообещав дать жалование для их конных отрядов. По сообщению армянских историков, сразу по прибытии феодалов схватили, заперли в церквах Нахчавана и Храма и сожгли. В армянской агиографической литературе рассказывается о том, что их уговорили войти в церкви обманом, якобы для того, чтобы они дали клятву верности. Как только те вошли, арабы заперли двери и подожгли деревянные своды. Куфи полностью подтверждает агиографические источники («двери церквей были заколочены, облиты нефтью и подожжены»).

Восстание 703 г. в Армении хотя и было подавлено, тем не менее оно заставило халифат несколько изменить свою политику.